

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիտիկոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԻՐԵԼԻ
—)
Կրթութեան և յին տրուի
—)
Իրանացիական տղր 20 սան-
քիս և ևրեհն աւելի սն-
գաւններու համար 20 Օլօ
գնդ կըլլայ:

ՇՆԱՐԱԹ

Նախկ և գրաւ դրկէ
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱՐԱԹ ՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՆԱԿԱՆՈՒ 3. ԱՌԻՖԻԱՍԵԱՆ

ՍԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐՈՒՆ

«Շարժում»-ի երկրորդ տարե-
շրջանը կը սկսի Փետր. 1-ին:
Որովհետև մեր բաժանորդնե-
րուն մեծագոյն մասին պայմանա-
ժամը կը լրանայ այդ միջոցին,
կը խնդրենք որ յառաջիկայ
շրջանին կանոնադրապէս թերթ
ստանալ փափաքողները բարե-
հաճին շուտով նորոգել իրենց
բաժանորդագրութիւնը:
Նաև կը խնդրենք մեր գոր-
ծակալներէն որ բարեհաճին
անյայտ զրկել մեզ անցեալ
շրջանի մարման հաշիւները
և մնացորդ պահանջները:

ՍԱԿԵՂՈՒՆԻԱ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Թրքական բռնակալութեան
վայրագ ուժի ներքև ընկնուած
այլ և այլ քրիստոնէայ երկիրներ
մէկիկ մէկիկ իրենց աշատու-
թիւնը ձեռք բերին: Այժմ՝ րե-
ւելքի մէջ, քրիստոնէայ և մար-
դասէր (•) աշխարհի մարքերը
յուզող երկու գլխաւոր երկիրներ
միայն մնացին—Մակեդոնիան և
Հայաստանը:
Այդ երկու դժբաղդ քոյր աշ-
խարհները տանջող ցաւերը այն-
քան նոյնանման են, այնքան ա-
նոնց ազատական ձգտումները և
գործունէութեան ուղղութիւնը
զուգահեռական որ, իրենց ճա-
կատագրերը, յայտնապէս սերտ
կերպով կապուած են իրարու
հետ: Ու այդ պատճառով է որ
մենք չենք կրնար անտարբեր
մնալ Հայաստանի այդ սգաւոր
քրոջ ազատութեան սուրբ գոր-
ծին շուրջը սիրող իրարանցու-
մին հանդէպ:
Հայաստանի հարիւր հազարնե-
րու քառմեկի ջարդէն և 1895ի
Մակեդոնիոյ մէջ տեղի ունեցած
շարժումներէն վերջ, 19րդ դա-
րու խոշոր պետութիւնները վճ-
ռած էին վերջապէս գարման մը
խորհիլ այդ երկրին ցաւերուն
համար: 1896ին սկիզբները այդ
պետութիւնները իրենց գիւտնա-

գէտ-պատուիրակներուն միջոցաւ,
1897 մարտ 19ին ստորագրեցին
բարենորոգումներու ծրագիր մը,
որ Մակեդոնիոյ բազմաշարժար
ժողովուրդին վերջերուն համար
զովագուցիչ սպեղանի մը պիտի
ըլլար: Սակայն Թրքո-Յունական
պատերազմին ատեն այնքան աժան
յաղթութիւններով փրցցած Թուր-
քին անսպասելի փառքին մէջ,
մարեցաւ նաև բարենորոգում-
ներու գործադրութեան յոյսը:
Անցեալ տարի երբ կրէապի
քաջերու ազատութեան խնդիրը
իր բնական և ապահով ճամբուն
մէջ մտած էր արգէն, Մակեդո-
նական գործերու մէջ ուղղակի
չահ ունեցող երկու քրիստոնէայ
Սուլթաններ, քանիցս մտերմա-
ցին խորհուրդներ սուին հայոց
մեծ մարդասպանին, որպէս զի
նոյն իսկ իր երկրին օգտին հա-
մար, քիչ մը կարգ կանոն մտցնէ
իր եւրոպական նահանգներուն
մէջ, առանց սպասելու այն օր-
ուան, ուր արտաքին ճնշումներ
աւելի նեղ գրութեան մը պիտի
մատնէին զինքը: Սակայն Սուլ-
թան Համիտը արհամարհեց իր
բարեկամներուն խորհուրդները
և հակառակ անոնց և ուրիշ պե-
տութիւններու Մակեդոնիոյ նը-
կատմամբ վերջերս ցուցած
բարեացակամ գիտաւորութիւն-
ներուն, շանթալից պատրաստու-
թիւններ կը տեսնէ, իր մայրա-
քաղաքէն ազիկալից հեռագիր-
ներ կը խաւրէ աշխարհի չորս
կողմը, հասկցնելու համար քրիս-
տոնէայ աշխարհին թէ ինք թող
չի պիտի տայ որ կրէտէին պէս
Մակեդոնիան ալ ձեռքէն խլեն:
Յոյներու վճարած սուղանքէն
դեռ 2 միլիոն ոսկի կայ օսմ.
պանդային մէջ և Համիտը այժմ
այդ գումարով կը ջանայ բարե-
կարգել իր փտած բանակը:
Մարտանաւերը նորոգել կուտայ,
նոր թնդանութիւն կը գնէ, ա-
նոնց վրայ փորձեր կը կատարէ,
իր սովալլուկ զինուորներուն
ձեռքը նոր հրացաններ կուտայ,
նոր շահատակութիւններ, նոր
տեսակ թրքական ոճիւրներ գոր-
ծելու համար: Եւ քրիստոնէու-
թեան այդ ամեն մարդասպանը,

լաւ գիտնալով որ, այլ եւս շատ
ալ իրաւունք չունի ու է քրիս-
տոնէայ պետութեան մը պաշտ-
պանութեան վրայ չափազանց
յոյս դնելու, ինք իր անձնական
ուժին վտանգ կերելու երկու տա-
րիէն իր բոլոր վայրենի վոհմակ-
ները նոր դրութեամբ պիտի սպա-
ռազինէ և պարաստ պիտի գըտ-
նուի իր բազմաթիւ լճնամիւնե-
րուն առանձինն գիւտագրուել:
Սակայն իր չորցած, ցամքած
մարմին ամենէն աւելի սարսափ
ազդողները շահամուլ և անմիա-
բան եւրոպայի հզոր մարտանա-
ւեր ու սարսափարկու լէգէոնները
չեն, այլ իր երկու սարքերուն
տակ ընկնուած այն երկու յոգ-
նած, վիրաւոր, առեւելոյթս քնա-
ցած առիւծները—Մակեդոնիան
և Հայաստանը:
Ու հիմայ անոնք, մանաւանդ
առաջինը, կենդանութեան նշան-
ներ ցոյց կուտան: Մարտը եւրո-
պական մամուլը կը վկայէ թէ, այս
միջոցին Մակեդոնիոյ մէջ խուլ
բայց ահաւոր բան մը կը պատ-
րաստուի: Բոլոր յեղափոխական
մարմինները տենդոտ գործունէ-
թեան մէջ են: Մակեդոնական
հուրը տակաւ արծարծելու վրայ
է և հասած է այնպիսի վիճակի
մը որ վայրկեանէ վայրկեան պի-
տի բռնկցնէ ամբողջ Պալպանիան
թերակալին—գուցէ ամբողջ աշ-
խարհը:
Գաջարի, ժայռորդի՝ րէտա-
ցիներէն յետոյ կարգը կուգայ
Ազեքսանդր Մեծի հայրենակից-
ներուն: Անոնք վտահ են ի-
րենց վրայ, իրենց ուժին վրայ,
ժողովրդական ուժի գիւցազնա-
կան յաղթանակին վրայ:
Իսկ մե՞նք...
Մենք դեռ պիտի շարունա-
կենք պրպտել մեր հին հաշիւ-
ները, ողբալ, լալ անցեալին
վրայ մոռնալով ներկան, արհա-
մարհելով ապագան: Մեր բիւ-
րաւոր նահատակներու ցիրուցան
ոսկրոտիքները, գիշերահաւերու
ողբերով չէ որ պիտի մխիթար-
ուին, վրէժ կը պահանջեն ա-
նոնք, արեան գէմ արիւն...
Չէ՛, լալու, ուժամարի՛ զինա-
թափ ըլլալու ժամանակը չէ: Գերի

աշխարհներու վրայ ամպեր կը
հաւաքուին, սեւ ամպեր, որո-
տում և կայծակ, որոնք մահ և
աղատութիւն միանգամայն պիտի
սփռեն:
Թող հայ քաջերը լարեն իրենց
ջղուտ բաղուկները, թո՛ղ հայ
հարուստները բանան իրենց գիրգ
քաղկները: Հոսի հայուն դրամը,
հոսի նաև հայուն արիւնը:
Դեռ ժամանակները շատ վայ-
րենի են, իրաւունքը, ազատու-
թիւնը սուրին ծայրն է, հրա-
ցանին փողին մէջ: Ղոհողութիւն
կուզէ ան, կռիւ և արիւն, հե-
րոսական արիւն...
ՎԵՏԱ



ՄԱՐԻ—ԼՈՒԻԶ
ԻՇԵԱՆՈՒՇԻՆ

Երբ անոգոք հեռագիրը կայծակի
մը արագութիւնով տարածեց այն
սեւ լուրը, թէ չկայ այլ եւս Պուլ-
կարիոյ սիրեցեալ, ազնուանոցի
իշխանուհին, Մարի—Լուիզը, ցըն-
ցուեցաւ ամբողջ երկիրը:
Մահուան կոյր մանգաղը, երբեմն
այնքան կատաղի, որ ամբողջ ժողո-
վուրդներ կը լացնէ, լացուց նաև
Պուլկարիոյ ժողովուրդը, անգթօրէն
հնձելով անոր ամենէն եզակեան, ամե-
նէն բարի ու ժողովրդական անդրա-
նիկ սիրուհին:
Մարի—Լուիզ իշխանուհին, որ կա-
թոլիկներու սովորութեան համաձայն
կը կոչուէր նաև Բիա, Թէրէզա,
Աննա, Ֆէրսինանա, Ֆրանսուազ,
Անթուանէթա, Մարկարիթա, ժո-
ղէֆինա, Փարօլինա, Պլանշ, Լիւձիա
և Այօօլինա, որ ծնած էր 1870
յունվար 5, 17ին, Բարմի եւ Բիաչէն-
ձայի Դուքս Բօպէրթ Պուրպօնիանի
14 զաւակներու անդրանիկն էր: Իր
մայրը Պուրպօնիան Մարիա իշխա-
նուհին էր, երկու Սիկիաներու հան-
գուցեալ թագաւոր Ֆրանսիանտ Բ.ի
դուստրը: Նա տակաւին 12 տարեկան
էր, երբ մեռաւ իր մայրը:
Իր ստաջին դաստիարակուհին էր
անգլուհի մը—միս Մարի Ֆրազէր:
Փոքրիկ իշխանուհին դեռ իր կեան-
քին ամենաթարմ օրերէն արթուն
հոգի մըն էր: Կր հետաքրքրուէր քո-
լոր աշխարհի գործերովը, կը քննէր
եւ մտէն սեղեկանալ կուզէր հեռա-
ւոր երկիրներու մէջ անցած գար-

ձաններուն : Իսկ յետոյ տակի մեծ-
նալով ճշմարիտ : Իրաճարր գարձաւ
գեղարուեստներուն : Ազու , հրեշտա-
կային ձայնով կերպէր եւ վարպետ
ձեռքով , հրաշալի կերպ վ կը նկա-
րէր : Սակայն աւելի վերջերք , բազմ
իրեն վերապահած էր նստիլ նստե
րիտասարգ , յոյսերով լիցուն իշխա-
նապետութեան մը գահին վրայ :

Այն հոգեկոտոր թուականը , 6
սեպտեմբեր 1885 , որ Պուլկարիոյ
համար փայլուն յաջողութիւննե-
րուն , փառաս որ յաղթանակներու
նոր տարագլուխ մը բացուեալ , Ա-
րեւելեան Բուսթիլին միացուց Պուլ-
արիոյ : Այս երիտասարգ եր-
կիրը իր ետանդուն բանակին Ար-
պիոյ վրայ ստորած յաղթութիւննե-
րով փառաւարտեցաւ եւ երկրորդ
անգամ ցոյց տուաւ աշխարհի թէ ի-
րաւունք ունէր իր արժանաւոր տեղը
բռնելու անկախ եւ ազատ երկիրնե-
րու քարակէտին վրայ : Միւսներուն
թուականի բազմաթիւ նեւեանքն
էր , որ Պուլկարիան հակառակ իր
ունեցած բազմաթիւ թշնամիներու
ստոր գաւերուն , իրեն գահին վրայ
ունեցաւ իր ընտրեալը : Ն. Ա. Բ.
Ֆելքարիանա իշխանը , պուլկար ժո-
ղովուրդի սիրուն գահելով ամէն ինչ ,
զովկի վեհանձնութիւնով կապեց ի-
րեն բազմը Պուլկարիոյ անորոշ բազ-
դին հետ եւ պարզեց իր հզօր ձեռքը ,
անոր թշնամիներուն դժոխային թա-
կարդներուն գուրս քաշելու հա-
մար գայն : Եւ վերջապէս Պուլկա-
րիան , ի լրումն իր փայլուն յաջո-
ղութիւններուն , իր գահին վրայ
բարձրացած տեսաւ նստե ամենէն
բարձր , ամենէն ազնիւ իշխանու-
նին :

Մարի Լուիզ , Պուլկարիա ոտք
կոխած օրէն , գրաւեց եւ վախճեց իր
ժողովուրդին սէրն ու անսահման հա-
մտկութիւնը : Շատ անբախտ ամու-
սիններ , թշուառ մայրեր , լաւ
ճանչնալով իրենց տիրուհւոյն բարի
եւ ազնիւ սիրտը , անոր բարեխօսու-
թեան կը դիմէին իրենց ցտեղերուն
զարման գտնելու համար : Նա քա-
նի քանի անգամներ այցելած է նստե
մեր , Պուլկարահայերու զանազան
քաղաքներու եկեղեցիները , յայտ-
նած է իր սէրն ու համակրութիւնը
եւ առած իր նուէրները :

Մարի-Լուիզ իշխանուհիի անձնա-
ւորութեան վրայ միացած էին
բարձր իշխանուհին եւ ազնիւ , ըն-
տանեսէր ու խնայող կինը : Նա մեր
երկրին խաղաղութեան եւ բարու-
թեան հրեշտակն էր , եւ սակայն այն-
քան շուտ թուա երկինք :

Յարգենք անոր թողած անունը :
Պաշտենք անոր յիշատակը :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ծ Ո Ւ Լ Ո Ւ Թ Ի Ն Ե Ր

Ինչ է ծուլութիւնը :

Այդ բառի բուն իմաստը բարոնե-
լու համար այնքան էլ հեշտ չէ մի
ճիշդ բնաւորութիւն ապա : Սովորաբար
ծուլութեան տակ հասկացվում է աչ-
խատասիրութեան , գործունէութեան
հակառակը , անանց նայելու արտա-
դրած արդիւնքի վրայ : Կան աշխա-
տասէր մարդիկ , որ չը նայած իրենց
տոկուն աշխատանքի վրայ , գրեթէ
ոչինչ չեն արտադրում եւ կան ծոյ-
լեր , որ ամենաչնչին աշխատանքով
չնորձիւ իրենց ընդունակութիւններ
եւ տաղանդի , մեծ գործեր են կա-
տարում :

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ն Ե Ր


Սիդիստի , 18 Յունի .

Քաղաքիս ընթերցարանի Պատ-
վարչութիւնը լսարան մը հաս-
տատելէ յետոյ քանի մը օր ա-
ռաջ ալ ներկայացում մը տուաւ
ինպատ ընթերցարանի : Խաղը
որ ազգային կեանքէ առնուած է
Պ. Ա. Շաքեանի հեղինակու-
թեամբ գրուած էր , շատ յա-
ջող կերպով ներկայացուեցաւ ե-
րիտասարգներու խմբի մը կող-
մէ , եւ լաւ ապաւորութիւն թո-
ղուց ներկայ եղող ազգային-
ներու եւ նոյն իսկ օտարազգիներ-
ու վրայ : Յառաջ եկած հասոյ-
թը պիտի յատկացուի նոր գըր-
քեր եւ արտասահմանի կարեւոր
հայ թերթերը բերել տալու :

Մեր ազգային վարժարաննե-
րէն արական սեռինը բաւական
բարեկարգ վիճակի մէջ կը գըր-
նուի շնորհիւ անօրէն-գասասառ
Պ. Վ. Տաքեանի որ կեդրոնա-
կան վարժարանի շրջանաւարտ-
ներէն է : Բայց չը նայած որ
իգական սեռի կրթութիւնը ա-
ւելի կարեւոր է , ազգիանց վար-
ժարանը ողորմելի վիճակի մը
մէջ կը գտնուի անփորձ ու տը-
գէտ վարժուհիի մը յանձնուած
ըլլալուն պատճառաւ : Կը յու-
սանք թէ Պատ. հոգաբարձութիւ-
նը հիմա ալ ուշագրութիւնը պի-
տի դարձնէ ազգիանց վարժարա-
նին վրայ եւ արժանաւոր ընտ-
րութեամբ մը պիտի ուղէ մը-
զում տալ արդէն բաւական ետ
մնացած մեր իգական սեռին
կրթութեան գործին :

Անցեալ տարի մանկապարտէզ
մըն ալ հաստատուեցաւ , բայց
հաղլւ վեց ամսուան զոյտութենէ
մը ետք , գոցուեցաւ որովհետեւ
ձեռնարկները իրենց պղտիկներուն
օգտին համար չուղեցին նիւթա-
պէս քաշալերը այդ հաստատու-
թիւնը :

Վաղինակ



Ե Ի Ր Պ Ա Ե Ի Հ Ա Յ Ա Ս Մ Ա Ն

Հայկական խնդիրը եւրոպա-
կան տէրութեանց զբաղման ա-
ռարկայ ըլլալէն ի վեր , ամէն
հայ աչքը գէպի աշուճաւոր
գարձուցած է , վեց մեծ պետու-
թիւններէն ու մասնաւորապէս
Անգլիայէն օգնութիւն ակնկալե-
լով : Դեռ մինչեւ այսօր տխուր
փորձառութիւնը չի կրցաւ համո-
զել մեզ թէ «օտարութիւն օտար»
է ու մազի չափ անզամ չը ցանկար
վտանգել իր շահերէն՝ մարդասի-
րական զգացումներու գոհացու-
մին համար :

1894ին , երբ Սասնոյ կոտորա-
ծին լուրը եւրոպա հասաւ , Անգ-
լիոյ մէջ ազատականները , յորտ
Ռոզպէրիի առաջնորդութեամբ ,
Վիքթորիա թագուհին ներկա-
յացան ու խնդրեցին որ , Պերի-
նի դաշնագրութեան համեմատ
Հայաստան բարեկարգութիւն
թագուհին հայկական շարժերէն
յուզուած , պատասխանեց . «Պեր-
լինի դաշնագրութենէն աւելի
բան մը ըրէք այս ստապեալ
ժողովուրդին» : Երբ ին քաղա-
քական խնդիրներ վրայ հասնե-
լով , ազատականները տեղի աը-
ւին յորտ Սալզպուրիի դահլիճին
ու հայկական խնդիրը տարբեր
զոյն մը առաւ :

1895ին , երբ Հայաստանի ընչ-
կոտորածը տեղի կունենար ,
Ռուսիա 60,000 զօրաց բանակ
մը կուղէր Հայաստան մտցնել ,
բայց յանկարծ ստիպուեցաւ ետ
դառնալ : Այս խնդրին նկատ-
մամբ Անգլիոյ Բարլամենթին
մէջ եղած հարցման մը պատաս-
խանելով յորտ Սալզպուրի կըրէ .
«Բարիկի եւ Պերլինի դաշնա-
գրութիւնները կարգիլն Ռու-
սիոյ Հայաստան զինուոր մտցնել :
Մեր պարտազանութիւնն էր իմաց
տալ իրեն» :

Գարձեալ , 1896ին երբ ջար-
գերը վերսկսան , Անգլիացի ժո-
ղովուրդը սաստիկ յուզման մէջ
էր : Միլիտանոր նամակներ զը-
կուեցան Սալզպուրիին , միլիտ-
նաւոր ժողովուրդ Բարլամենթին

գիմեց եւ Հայոս Բարբի մէջ
ցոյցեր ըրին միաձայն սղաղա-
կելով . «Հայաստանը պէտք է
փրկուի : «Անգլիական առիւծը»
ինչպէս կըսեն , կատրած էր եւ
կը պատրաստուէր կուլ տալ իր
նախարարապետը : Սալզպուրի
յաջ գիտցաւ իրեն հասնելիք
վտանգը եւ իր սովորական իտրա-
մանկութեամբ ըսաւ . «Ես ժողո-
վրդեան խոնարհ ծառան եմ , եւ
պատրաստ կատարելու անոր ա-
մէն իրաւացի վափաղները» :
Անցան սակայն օրերը , ժողո-
վրդեան յուզումը հանդարտեցաւ
եւ յորտ Սալզպուրի յորտ Տըֆ-
րինի պէս՝ յայտարարեց թէ
«Անգլիական զրահաւորները չէին
կրնար , նոյնան տապանի նման ,
Արարատ լեռան վրայ բարձրա-
նալ : Թէեւ իրաւապէս կը փափա-
գին հայկական խնդրի լուծման ,
բայց գծախտաբար Հայոց օ-
գուտ մը չունենալէ վատ , իրենց
չահերն ալ կը վտանգուին , եւ
յովհետեւ եւրոպական տէրու-
թիւնը հակառակ են իրենց» :

Ատոր պատասխան Գլէյտըն շատ
լաւ ըսած է . «Հայական ջար-
գերու միջոցին , երբ անգլիացի
ժողովրդեան յուզումը իր պա-
գաթնակէտին հասած էր , եթէ
Սալզպուրի հրաման տար իր նա-
ւերան Տարտանելը ճեղքել , ժո-
ղովրդեան համակրանքը վայե-
լած պիտի ըլլար : Չըրու վայն
ու զեղեցիկ առիթը կորսնցուց . . .»

Նոյնանման գիրք մը բռնեց նաև
Պրանսա , որուն Արտաքին գործոց
նախարար Հանթոթ փաշան թեր-
թիւրու միջոցաւ կը յայտարարէր
թէ «Հայկական խնդիրը լոկ կըր-
թական խնդիր մըն է» : Եւ երբ
կ. Պուլոյ գետպան Պ. Գաճպոյն
ջարդի մը լուրը կը հաղորդէր
Պրանսայի Արտաքին գործոց
նախարարին , Հանթոթ զայն
իր շահերուն կը գործածէր : Ու
երեսփոխանաց ժողովին մէջ ,
երբ անգամ մը հարցում կըլլար
ջարդերու մասին , ամենայն
լրութեամբ կը պատասխանէր
թէ՝ այդ պիտի լուր մը ստացած
է Պուլոյ Ֆրանսական գետպանէն

Մուլտութիւնը՝ աշխատասիրութեան,
գործունէութեան հակառակ լինելով
մի անբնական երեւոյթ է :

Արդարեւ , ամբողջ տիեզերքը ան-
զապար գործունէութեան , շարժման
մէջ է , նա հանդիստ չը գիտէ , ծու-
լութիւն չը գիտէ . կեանքը շարու-
նակ ետում է մեր մէջ եւ մեր շուրջը :
Այդ քարք՝ որ ըստ երեւոյթին ան-
շարժ ընկած է գետնի վրայ՝ մի վայր-
կեան հանդիստ չունի եւ երկրագնդին
հետ , սրի մասն է կազմում , անապին
արտադրութեամբ պատում է արեւի
շուրջը , անսահման տարածութեան
մէջ . նրա ներքին կազմութեան ա-
մենայնայն մասնիկներն անգամ չա-
րունակ թրթռուն շարժման մէջ են :
Կենդանի աշխարհը , մարդուս մար-
մինը , օրինակ , նոյն տոկուն աշխա-
տանքի , նոյն գործունէութեան օրէն-
քին է ենթակայ . մեր սիրտը , մեր ար-
եան բազաղրիչ մասնիկները մի բոպէ

հանդիստ չը գիտեն . մեր ջղերը՝ նոյն
իսկ երբ մենք համագտանում ենք՝
յարունակ դրսից , չըջապատող աշ-
խարհից ապաւորութիւններն են առ-
նում : Մեր մարմնի հիւսվածքների
մէջ տեղի են ունենում անընդհատ
մշակում եւ փոխանակութիւն գա-
նազան նիւթերի : Մարդկային հա-
սարակութիւնների մէջ մենք տես-
նում ենք նոյնանման ետուն գոր-
ծունէութիւն , նոյնանման անդա-
դար աշխատանք , նոյն շարժումը
գէպի նոր-նոր ձեւակերպութիւններ ,
ստաջողմութեան ուղիներով :

Այեկոծ ովկիանոսի նման անընդ-
հատ ետացող տիեզերքի մէջ ինչպէ՞ս
են պատահում անհաստներ , որ ընդհա-
նուր օրէնքից խոյս են տալիս : Ին-
չօ՞վ բացատրել ծուլութիւնը՝ այդ
անբնական երեւոյթը :
Նայա եւ առաջ պէտք է ի նկատի
առնել , որ ծուլութիւնը , բոսի ըն-

գարձակ իմաստով , գոյութիւն չու-
նի , որովհետեւ լրակատար անգոր-
ծունէութիւնը , բացարձակ ծուլ-
թիւնը մահ է : Մուլտութիւն լուսաբի
տակ սովորաբար հասկացվում է մար-
դուս գործունէութեան փոքրացումը
մի յայտնի հասարակութեան ան-
հաստերի միջակ գործունէութեան
չափից ցած :

Բայց գործունէութեան այդ իտք-
րացումը արդեօք պատճառներ չու-
նի՞ :

Ի հարկէ , ունի : Միայն խորը չը
թափանցող , մակերեսութեան հայ-
նացք ունեցող մարդիկ եւ մութ
սպիտակներն են կարող ծուլութիւնը
նկատել իրրեւ մարդուս վատ կամքի
հետեւանք :

Օրօրոցից մինչեւ պերեզման ա-
ռողջ , նոյնաչ մարդը շարունակ ջան-
քեր է թափում , նա չը գիտէ թէ ինչ
է ծուլութիւնը : Մանուկը՝ որ անակ-

և թէ՛ պետութիւնները պէտք
եղած քայլը պիտի առնեն չար-
ղը կասեցնելու համար :

Իսկ Գերմանիոյ Պիլզնաքան
քաղաքականութիւնը յայտնի է
մեզ : Գերմանիա որ առեւտրա-
կան հաշիւներէ զատ , Երբեք
չան մը չունէր ամբողջ Արեւել-
եան խնդրին մէջ , արտասանած
էր արդէն իր վերջին բառը .
«Ամբողջ Արեւելեան խնդիրը
Յոմբրանեացի զինուորի մը հետ
չեմ փոխանակեր» : Այս զգուշի
արհամարհանքը , մանաւանդ հե-
տզհետէ ցոյց տուած գծուծ
թրքամուտութիւնը , ամէն արդա-
րաւէր ազգերուն պէտքալի դար-
ձուց Գերմանիա : Նոյն անասը-
բերութիւնը , նուազ թրքասի-
ութեամբ սակայն , ցոյց Աս-
տրիա , որ իր Ֆրանց-Նոզէֆ
կայսեր բերնով կրէր Եւրոպայի
«Հայերը շատ կը սիրեմ , բայց
իմ զինուորներս աւելի կը սի-
րեմ» :

Դալով Ռուսիոյ , երբ հայկա-
կան շարժումը սկսաւ , Ռուսիա
կարծեց թէ ժամանակը եկած է
իր թեւերը Հայաստանի վրայ
տարածելու : Բայց երբ Անգլիոյ
ընդհանրութիւնը տեսաւ , անմի-
ջապէս բարեկամութիւն հաստա-
տեց «Մեծ մարդասպանին» հետ ,
որով պատճառ եղաւ Հայաստանի
աւերումներուն : Ռուսաց Զարն
ու Լուպանօֆ , Երբ Եւրոպական
արքայութիւններն այցելելու ելած
էին , Աստրիոյ արքունիքին մէջ
զինուոր բաժակներ պարպուած
միջոցին , Ֆրանց-Նոզէֆ կայսրը
առաջարկեց հայկական խնդիրը
կարգադրել : Լուպանօֆ պատա-
խանեց . «Այդ խնդիրը թուրքին
ձգելու է . ան կարող է կարգա-
դրել» : Նոյն իրիկուն Լուպանօֆի
խօսքերը Սուլթանին կը հեռա-
գրուին , որ քաջայերուած , Վա-
նի կոտորածը սարքեց : Սատկե-
ցուցին Լուպանօֆը . բայց երանի
թէ մէկ քանի որ առաջ այդ վը-
սեմ գործը կատարուած ըլլար :

Ահա թէ , ընդհանուր կերպով ,
ի՞նչ դեր կատարեցին Եւրոպական

աէրութիւնք հայկական խնդրին
մէջ : Կլաստողն իրաւամբ գիտել
տուաւ . «100,000 անմեղ հայոց
արեւմբ Հայաստանի հողը կար-
մեցաւ , և ոչ մէկ տէրութիւն մեծ
մտրդասպանին ձեռքը կասեցուց ,
ընդհակառակը ամէնքն ալ սնոր
ջատագով հանդիսացան» :

Եւ , սակայն , հակառակ այս
իրողութեանց , դեռ մեր յոյսը
Եւրոպայի վրայ դրած , օտար-
ներէն ազատութիւն կակնկալենք .
Ամէն օր կը տեսնենք օրինակնե-
րն անոնց որոնք իրենց բազկի
զօրութեան ապաւինած , յաջո-
ղեցան աշխարհի ուշը իրենց
վրայ դարձնել և ստիպել որ ի-
րագործուին իրենց արգար պա-
հանքները : Քուպան ստիպեց
Միացեալ-Նահանգները որ զինքը
անկախ հոչակէ . Ֆրիլպպեանք
նոյն ճանքան բռնեցին , ու այսօր
կը պատրաստուին Ամերիկացոց
դէմ զինուորի իրենց պահանջը-
ներուն գոհացում ստանալու հա-
մար : Իսկ մենք , ընդհակառակը
ձեռքերնիս ծոցերնիս դրած , կը
սպասենք որ ուրիշները մեզի
զան փրկելու , և միևնոյն ժա-
մանակ զիրար բզկտել կաշխա-
տինք : Ասիկա վատութիւն է , ու
դաւաճաններ են անոնք որ լու-
թիւն կը քարոզեն : Յեղափոխու-
թիւնը սկսած է ու պիտի վեր-
ջանայ յաղթական դափնինե-
րով : «Տառապեալ ժողովուրդները
երբ կապտամբին , կը չէր Լորտ
Պայրն , բռնաորոնները կը ծի-
ծաղին . բայց այդ ծիծաղը
անմիջապէս աղի արցունքի կը
փոխուի» : Սուլթանը ծիծաղեցաւ
Հայոց շարժման վրայ , բայց ատ
ծիծաղը իսկոյն սարսափի փոխ-
ուեցաւ , և այսօր քաջ գիտէ թէ
Հայ յեղափոխութիւնը դամոկ-
լեան սուրի պէս , իր գըլ-
խուն վրայ կախուած կը մնայ ,
որքան Հայաստան իր լուծին
տակ կը հեծէ : Ժ՛ի դարուն ,
երբ Զուլիյերիացիք իրենց հայ-
րենիքին անկախութեան համար
կը կռուէին Աստրիոյ դէմ , Ար-
նոլտ Ռոթիքէտ , յեղափոխական
բանակին գլուխն անցած՝ «աղա-

տութեան ճանքան բանանք» կա-
ղաղակէր : Գնդակը անցաւ հե-
րոսին կուրծքէն և ազատութեան
ճանքան բացուեցաւ : Մեր
հերոսներն ալ , Սրնոլտի նման ,
ազատութեան ճանքան բացին :
Հետեւինք անոնց ու մեր իտէալը
պիտի իրականանայ յայտագալ . . .

2610

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԵՇԱՏԱԿՆԵՐ

Այն ներքին կռիւներն որ
վանքին նախկին վանահայր
հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոս
Մամիկոնեանի պաշտօնավարու-
թեան վերջին օրերուն ու ներ-
սէս վարդապետի վանահայրու-
թեան օրով առ երեւոյթս դադ-
րած էր՝ դարձեալ կը բորբոքի :
Վանքի միաբանութեան մէկ եր-
կու օգտակար անդամները զըզ-
ուած՝ կը սկսին ցրուիլ , դպրոցը
կը գոցուի , ուխտաւորները կը
նուաղին , ու հակառակ այս ամե-
նուն վանականաց անխորհուղ-
կուները կը շարունակուին ա-
նընդհատ մինչեւ որ Հայաստանի
նոր կոտորածները կուգան վերջ
տալ այս ամէն շարժումներուն :
Վանքը կարեւոր պարտքի մը
ենթարկուած՝ տխուր կացու-
թիւն մը ունի հիմա : Իր անձնը-
ւէր առաջնորդ-վրահայրը հա-
յոց Անյուշ բերդը՝ Երուսաղէմ-
աքսորուած է , եկամտոյ աղ-
բւրներն ամբողջովին ցամքած
ու վանքի հարստութիւնը անօ-
գուտ փճացած է : Այժմ այդ
պատմական ու երբեմնի փա-
ռաւոր վանքը՝ քանի մը սգէտ
ու խաւարամիտ , սեւ հոգի վար-
դապետներու , կարգ մը ողորմելի
մաւրդերու տխուր օրջ մը դար-
ձած է :

Առաքելոց կամ թարգմանչաց
վանքը , որ նմանապէս կառուց-
ուած է Մուշի գէպի Արեւելա-Նիւ-
սիս գտնուած Սարաբաժնին վրայ՝
իր գիրքով ու տեսարանով հիա-
նալի է : Իր փառաւոր կաթողի-
կէն ու իր հսկայ շինուածքի գո-
թական երեւոյթը , մեր ազգա-

յին անցեալ փառքին ու կրօնա-
կան կեանքի մեծութիւնը կը
փաստէ : Հոս այս դարաւոր առ-
ճարի հովանիին տակ յաւիտենա-
կան անդուր քունով կը հանգչին
մեր ոսկեդարու անմահ թարգ-
մանչաց հոչակաւոր հերոսնե-
րը : Այդ բաղմադարեան հաս-
տատութիւնն իր ներկայ դրու-
թեամբ զգալի կընէ այն մեծ
գերբ որ կատարած է նա , իբր
դպրեվանք , ոսկեդարու մէջ
մեր մտաւոր ու իմացական դար-
գացման վրայ : Երբեմն 80—84
թուականներուն Ասիական ընկե-
րութեան կազմակերպութեամբ ,
անուանական արհեստանոց-դըպ-
րոց մը բացուած էր 20—25
աշակերտներով , սակայն ինչ
ինչ անդիմադրելի պատճառնե-
րով նոյն ընկերութեան գոյու-
թիւնն կարճ ժամանակի մէջ վր-
տանգուելով դպրոցն ալ գոյուե-
ցաւ : Հայաստանի վերջին ընդ-
հանուր կոտորածներուն այդ
վանքն ալ իր կարգին կրած է
քրդական ու թրքական ամէն
հարստահարութիւն , ուրկէ ետք
կարծեմ որքանոց մը բացուած է
հոն Պոլսոյ Պատրիարքարանի ու
Մշոյ առաջնորդարանին վանքե-
րով , որ եթէ յարատեւէ գէթ
քանի մը որը մանկիկներ ժամա-
նակի մը համար միտթարութիւն
կը գտնեն և իրենց ծնողները
անգթաբար խողխողող գազան
թուրքին ու վայրագ քիւրաի
պատճառած դառն զրկանքներէն
մասամբ կը թեթեւան :

Նմանապէս Մշոյ գաշտի շէն
ու բաղմամարդ հայ գիւղերը ի-
րենց նիւթական միջոցներէն
թրքական յուր քաղաքականու-
թեան հետեւանքով զրկուած ,
դառն կացութեան մը ամենաճա-
նր ազգեցութեան տակ , միշտ
յուսոյ ու միտթարութեան օրե-
րուն կը սպասեն աներեւակայե-
լի տոկունութեամբ :

Մշոյ սարերուն և երկրին գե-
ղեցկութիւնը առածի կարգ ան-
ցած է : «Սալնոճորի» ժողովուր-
դը ապէս կորակէ զայն . «Մշոյ
սարեր մշուշ է , իր հողն ու

ներ կ'առուցանուծ խաղաղով և ձե-
րունին՝ որ փոքրիկ պարտէզի մի
անկիւնն է մշակում և ծառեր տըն-
կում , որոնց ծաղկելը պուցէ ինքը չը
պիտի տեսնի՝ երկուսն էլ միայն
հնազանդվում են աշխատասիրութեան
ընկան օրէնքին : Աշխատանքը տոյն
աստիճան անհրաժեշտ մի պահանջ է
մարդու համար , որ նորագոյն բան-
ասիրում ու բանտարկեալներին աշ-
խատանք են տալիս՝ անհնազանդնե-
րին պատժում են աշխատանքից զր-
կելով : Միլիոնատէրերը և թագա-
ւորները նոյն իսկ զվարճութիւն են
փնտռում աշխատանքի մէջ :

Ուրեմն , եթէ մտրդս բնական պա-
հանջ ունի աշխատելու , ինչպիսի է
պատահում , որ մարդկային հասարա-
կութիւններին մէջ ծոյլ անհասանք են
առաջանում :

Անշուշտ , այդ երեւոյթը պատ-
ճառներ ունի , պատճառներ՝ որ զեռ

և սրաւականին չափ ուսումնասիր-
ված և վերլուծված չեն : Ներկայ
յօդուածով մենք մտադրի ենք միայն
մի թեթեւ ակնարկ ձգել այդ խնդրի
հիմնական կէտերի վրայ :

Իսկ եւ առաջ պէտք է ինկատի
տանել , որ ամեն մի աշխատանք ,
ամեն մի գործունէութիւն պահան-
ջում է մի յայտնի քանակութեամբ
ոյժերի սպասում՝ միկանուէրներով
կամ թէ ջգային ոյժերով : Ուր բա-
ւական քանակութեամբ ոյժ՝ պա-
հաստի ոյժ՝ չկայ , չի կարող գո-
յութիւն ունենալ լուրջ աշխա-
տանք , աշխատասիրութիւն : Ծոյլե-
կառքը շարժվելու համար պէտք ունի
քարածուխի , ձին բանեցնելու հա-
մար պէտք է նրան կիրակրել և լաւ
կիրակրել : Մարդս բացատրութիւն չէ
կազմում ընդհանուր օրէնքից :

Ներկայ հասարակութեան մէջ խիստ

բանց բաւականին չափ միս եւ գա-
րեջուր ստալով—որովհետեւ լաւ սնված
բանուոր աւելի մեծ գործ է տեսնում
և աշխատելով ծածկում թէ սնունդի
համար բրած աւելորդ ծախսերը , և
թէ մեծագոյն շահ է բերում իրեն
աշխատեցնողներին :

Այդ օրինակով մենք տեսնում ենք
որ , մի գաս ծախանալու շատ թէ քիչ
արամադիր մարդիկ աւելի մեծ աշ-
խատանք են արտադրում , աւելի
աշխատասէր են դառնում լոկ միայն
իրենց սնունդը բարելաւելով :

Կուակած չկայ , որ անբաւարար
սնունդը մեծ զիւր է կատարում ծա-
լութիւն ստալ բերելու մէջ , բայց
դա միակ պատճառը չէ :

ՈՐԻՐԶԱ—ԱՄԱՆ ,
(Շարունակելի)

Նուրն անուշ է, և իրօք, առաւելոտեան բարեխոսուն, երբ առն զական առաջին ճառագայթները՝ Բզնունեաց ծովին երեսնէն ցոյանալով, Իրգուռ ու Երբարով ճակատ լեռներուն վրայէն՝ ճարտար գողտրիկ զաշաի շուրջ ու բոլոր հաստատուած գլխերուն ողբերով լին կը պարգեւեն գիշերուն ճննացած անթափանձ մշուշով մը՝ այդ ընդարձակ գաշտն ու սարերը շատ անգամ պատուած կըլլան։ Ասոր համար է որ մեր հին դիցաբանութիւնը կը հաստատէ թէ, «Աստղիկ» հայկական գեղեցկութեան շքեշնազ աստուածուհին՝ Եփրատի մէջ իր առաւելեան զուարթ լոգանքը կատարելու ատեն իր դիցափառ լուսաշող մարմինը մահկանացուներու անտեսանելի ընելու համար կիշեցնէր այդ մշուշը իբր փարագոյր՝ որ իր թանձր խաւերով կը պատէր շորս կողմը։

Մշոյ ընդարձակ զաշաին հոյը կրախառն ու աւազուտ է, գրեթէ յարմար ամէն տեսակ պտղաբուծեան։ Տեղացիներու մշակութեան ու զբաղման գլխաւոր արտադրութիւնք են «Կարնցան» ու «Աշնցան» ցորենի տեսակներու հետ՝ կտաւտ, սխոռ, ոսոյ, կանեփ, դարի, իսկ լեռնային մասի գիւղերը կը մշակեն նաև կորեակ, հաճար ու գլղիլ։ Եստ անգեր արտերը շրարբի են, և եթէ շրարաշխական կողմակիր պուծեամբ՝ օր մը Մեղրագետի առատութենէն օգուտ քաղելով առատ շուր մատակարարուի այդ բարեբեր գաշտին, երկրին արգիւնաբերութիւնը եռապատկուելով, բնակչաց բազմամարդութեան հետ՝ հանգիստ ապրելու ամէն միջոց կարելի կըլլայ փայլել։ Բայց ներկայ թուրք ապրկար ու կոյր կառավարութեան օրով, մի միայն աւեր, թշուառութիւն, արհաւիրք ու տուայտանք սպասելէ զատ, տարբեր վիճակ կարելի չէ երեւակայել մեր արիւնտ հայրենիքին համար։

ԻԱՀԱ-ՊԵՏ

(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

Պարսից Մուզաֆֆէրէտին Շահին երկրորդ օրդին, Մելիք-Մանուր Միրզա, որ գէտի Երուսաղիմ պատրիարքի ելած էր, Բարիկի մէջ ունկնդրութիւն մը շնորհած է հայ պատգամաւորութեան մը որ ամբողջ Թուրքիոյ հայոց կողմէ, գացած էր իր համակրութիւնն ու երախտագիտութիւն յայտնելու... Ատրպատականի մէջ տեղի ունեցաւ իժգժուութեանց համար անշուշտ։

Այս պատգամաւորութիւնը, որ շատ հետաքրքրական բան մը եղած ըլլալ կերեւայ, երկուր ուղերձ մը ներկայացուցած է Շահպատէին, ուր շնորհակալու-

թիւն կը յայտնեն Պարսից կառավարութեան հայ ազգին նրկատմամբ ցոյցցած լաւ ընդունելութեան համար։ Շահպատէն որ դեռ 20 տարեկան պատանի մըն է, պատասխանելով իրեն եղած ուղերձին, փոխադարձ շքնորհակալութիւն յայտնեց է այն համակրական ընդունելութեան համար, որ ամէն տեղ ցոյց տուած են իրեն հայերը, բացառելով է թէ ինչպէս Պարսկաստանի արքայական ընտանիքին ժառանգները հաւասարապէս սիրած են ու կը սիրեն հայերը. յուսադրել է որ անցեալին սարսափները ալ չեն կրկնուիր մեր թշուառ հայրենիքին մէջ, և խոստացեր է պատգամաւորութեան ուղերձը ներկայացնել իր Վեհափառ հօրը։

—Տ. Մինաս Չերազ, իր «Առմէնի»-ին վերջին թուին մէջ, խօսելով Չօպանեանի «Պատասխանատուութիւնները» վերնագրով անձա՛ յօդուածին վրայ, որ հանդէսին 29 սիւնակները լեցուցած էին կըսէ թէ՛ Չօպանեան, առանց իր փաստերը ճշտելու և իր եզրակացութիւնները արամբանօրէն կշռելու, պարզապէս «ըսի ըսաւ»-ներու գեղով մը լեցուցած է իր յօդուածը, թէ և ու է շարամոռութիւն մը չունի թերեւս, ոչ ալ նոյն պար փաշաին որ դեռ կենդանի էր այն ատեն, հաճելի ըլլալու մարմա՛լ մը։ Ի միջի այլոց կը յիշէ նաև թէ որքան ձրի նախատինք մը կընէ երբ կը քննադատէ ներսէս Պատրիարքն ու Պերլինի Վեհափառները որ ամէն կարելի ջանք չի խնայեց հայկական դատին պաշտպանութեան համար։ «Չօպանեան որ անխորհուրդ գործ մը կը համարէ «երիտասարդ ու անփորձ» անձի մը իբր պատուիրակութեան թարգման ընդունուիլը կըսէ Չերազ, այդ անձը ան տարիքն ունէր ինչ որ այժմ ունի «Անահիտ» խմբագիրը, որ սակայն արգելք մը չէ եղած Չօպանեանին բարձր քաղաքականութեան վրայ ճանաչելու։ Իր յօդուածն աւարտելով, Չերազ կը յիշէ թէ Չօպանեան որքան կը խեղաթիւրէ իրողութիւնը երբ կըսէ թէ Գրիգոր Օտեան անանուն անձերու առջեւ արհամարհած է Պերլինի պատգամաւորութիւնը և զայն կազմակերպողը, քանի որ Օտեան իր գրութիւններու մէջ միշտ գովասանքով խօսած է այդ մասին։

ՄԵԼԻՔԻՄԵՆԵԿ ԵՊՈ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ Պատրիարքի Գրիգորի Եկեղեցւոյ ԿԱԼՍՑ
Տպարան «Անի» 1898
Գին 3.50 ֆրանք
Կը ծախուի Կ. Պոլիս Պ. Պալենց գրատան և Ֆօքշան (Ռումանիա) Վ. Մամիկանեանի մօտ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Թ Ո Ւ Ր Բ Ի Ս

Կայսերական իրատէի մը համաձայն, Սուլթանը Անատոլի երկաթուղեաց գերմանական ընկերութեան շնորհած է Հայտարարաշարի նախահանգստին և քարափին շինութեան ինչպէս նաև Հայտարարաշարի և Իւսկիտարի միջև երկաթուղւոյ տեղական գծի մը շինութեան արտօնութիւնը։ Նմանապէս գերմանական ընկերութեան մը արտօնութիւն տըրուած է Պոլսոյ և Գէօռուէնէի միջև ընդձովեայ հեռագրի մը շինութեան և շահագործումին։

—Վերջին անգամ օսմանեան զօրաբանակներու մէջ ծառայութեան մտած Բրուսիայի սպաներէն Ֆօն Մէսսէր Սալանէր նշանակուած է Մակեթոնիոյ բաժնին համար, իսկ հեծելազօրաց պետ Ֆօն Բիւտքիշ չորրորդ զօրաբանակին (Երզնկայ) մէջ գանուող մասնաւորապէս քրդական Համիդէ հեծելազօրաց համար։

—7 ու կէս միլիոն մարզէրեան հրացանները որ փամոնակէ մը ի վեր նաւուն մէջ կը սպասէին, այս անգամ՝ յանձնուած են տաճիկ կառավարութեան, արժէքը ստանալէ ետք։

ՖԻԼԻՊՊԵԱՆ ԿԿՁԻՔ

Մանիլէն հասած հեռագրի մը նայելով Ամերիկեան զօրաց ընդհանրամաստարը մեծ դժուարութեան պիտի ենթարկուի Վաշինկթընէն եկած հրամանը գործադրելու համար, մինչև Ապրիլի հետ հաշտութեան պայմանագրին վաւերացումը, ամէն միջոցաւ կղզոյն հանդարտութիւնը պահպանելու մասին։ Արդէն ատրճանակի հարուածներ սկսած են փոխմակուել ամերիկեան պահակազօրաց և տեղացիներու միջև։ Չերքակալութիւններ սկսած են կատարուիլ, Կըսուի թէ բռնակցութիւնները կը շարունակուին սակայն ամերիկեան պատուիրակներու և կղզեցւոց միջև։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եռուսթ Ալի պէյ որ Սօֆիայի մէջ երբեմն հրատարակուող «Ինթիֆա» թերթին խմբագիրն էր, Սուլթանին հրաւերին վստահած Պոլիս վերագաւնալուն՝ ձերբակալուեց է։

—Մոնթէնէկոյի իշխանին իբր նուէր տրուելու համար Սուլթանին յանձնարարած «Թիմզա» անուն զրօսանաւը Լազմ ու պատրաստ ըլլալով, մօտերո պիտի շրջուի Սեւ Լեռան իշխանին։

—Թուրքեպուլկար սահմանազրկին խնդրոյն փութով կարգադրութեան համար յանձնախումբ մը կազմուած է երկու տէրութեանց ներկայացուցիչներէն,

որ շուտով պիտի սկսի իր գումարուհները Պոլսոյ մէջ։

—Անգլոյ մէջ շորս մեծ ժողովրդական միթիւններ տեղի ունեցած են Չարին առաջարկին ի նպաստ։ Միաձայնութեամբ զէնընկեցութեան համար որոշումներ քուէարկուեց և քաջալերականներ ուղղուեց են Չարին, որպէս զի յարատեւէ իր ձեռնարկին մէջ։

—Չարը հրովարտակով մը հրամայած է ուս լեզուի ծանօթութիւնը պարտաւորիչ ընել Թինլանտիոյ սէնսթօներուն, կառավարչներուն և բարձր պաշտօնեաներուն համար։

Այս հրովարտակը սկզբնաւորութիւն մըն է անշուշտ Թինլանտիոյ ուսացման։

Պ Օ Ր Ս Ա

Վառնս 22 Յունուար

ՊՈՒՂՏԱՑ	
Վակօն, լիպրա	55—58, 5 էքթօլ. 9.40—10.60 ֆրանք
Արապա, լիպրա	55—60 5 էքթօլ. 9—12 ֆրանք
ԱՐԲԱ	
Լիպրա	42—50 5 էքթօլ. 6.40—6.80 ֆրանք
ՄԻՍԻՐ	
Վակօն, 55—57 լիպրա	6.10—6.20
Առապա, 55—60 լիպրա	(6.40—6.8)
Կիւնկէ 15—20 վակօն, 25—30 առապա	կէքթօլ տիր։
ՏԱՐԸ	
Կիւնկէ 12 արապա կէքթօլ տիր.	58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք
Առապա մուամէլէսի նարուէն 21 ֆրանք	հիսապը իւէ տիր։

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ԹԵՂԱՓՈՒԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ)

(Գին 1 ֆրանք)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնսի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՛ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալխեանի սրճարանը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահալղ, ինչպէս նաև պրօշիւններ։

Գիններն յոյժ գիւրամուտջելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՈՒԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնիլ կօշիկներ որոնք իրենց վրայ միացունեն ձեռի և գիմացկունութեան կատարելութիւն և մանաւանդ գինի շափառութիւն, առանց վարանելու գիմեցէք Ստեփան Խորասանեանի, Մուսալա, բազմիք փողոց, հաճի Հասան էֆէնտի օթելին տակ, հաւատացէք թէ առիթն պիտի օգտուիք։



Отговорникъ: А. СУКЯСОВЪ
Печатница «Взаимность», Варна